ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հունիսի 23-25-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Գայանե Գաբրիելյանին Շվեյցարիայի Համադաշնություն (քաղաք Ժնև) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Գայանե Գաբրիելյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Շվեյցարիայի Համադաշնություն (**ք. Ժնև**), 2022թ. հունիսի 23-25-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի՝ «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացմանը հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրհուսի կոնվենցիայի կողմերի երրորդ արտահերթ նստաշրջանին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Նստաշրջանի ընթացքում.

   - կայացել է շրջակա միջավայրի պահապանների հարցերով հատուկ զեկուցողի ընտրություն:
   - կառավարությունների, հասարակական և միջկառավարական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ տեղի է ունեցել բնապահպան ակտիվիստների գործունեությանն առնչվող կլոր սեղան քննարկում, ուր ներկայացվել է նրանց իրավունքների պաշտպանության լավագույն փորձը:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Կողմերի արտահերթ նիստին նախարարի տեղակալը հանդես է եկել ելույթով, որում.

- Նախարարի տեղակալը շնորհավորել է Միշել Ֆորսթին՝ միջազգային մակարդակով շրջակա միջավայրի պաշտպանների գծով հատուկ զեկուցող նշանակվելու կապակցությամբ:
- Նախարարի տեղակալը շեշտել է, որ առաջին Օրհուս կենտրոնը բացվել է Երևանում և ստեղծման առաջին իսկ օրվանից գործում է նախարարության ենթակայությամբ՝ հանդիսանալով հասարակություն-կառավարություն համագործակցության լավ հարթակ:
- Նշել է, որ Հայաստանն առաջիններից է, որ միացել է Օրհուսի կոնվենցիային: 2020 թվականին Արցախում սանձազերծված պատերազմի հետևանքով գործընթացները դանդաղել են, բայց արվում է լավագույնը մեր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու ուղղությամբ:
- Կառավարություն-բնապահպաններ արդյունավետ համագործակցության դրական օրինակների հիման վրա ընդգծել է բնապահպան ակտիվիստների հիմնական գործունեության կարևորությունը պահպանելու շրջակա միջավայրը և վայրի բնությունը, որը հնարավոր է միայն իրագործել Կառավարության համարժեք և պատշաճ մոտեցման արդյունքում:
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին նախագծի քննարկումները կատարվել են նաև հասարակական կազմակերպությունների և բնապահպան ակտիվիստների մասնակցությամբ:
- Ներկայացվել են Շրջակա միջավայրի նախարարության կողմից հասարակայնության հետ տարվող շարունակական աշխատանքները՝ ներկայացնելով տեղեկատվության արագ արձագանքման և հասանելիության արդյունավետ եղանակները:

Կայացել են հանդիպումներ.

1) Օրհուսի կոնվենցիայի համակարգող Էլլա Բելյարովայի հետ քննարկվել է կոնվենցիայի կողմերի հաջորդ հնարավոր հանդիպումը կազմակերպել Հայաստանի Հանրապետությունում՝ պահպանելով միջոցառման անցկացման պարտադիր պայմանները: Ձեռք են բերվել կայանալիք հանդիպումը մանրամասն ուսումնասիրելու և այն անցկացնելու հնարավորության և պայմանավորվածության մասին տեղեկացնելու քարուղարությանը:

2) Ժնև քաղաքի վարչական խորհրդի ֆինանսական, շրջակա միջավայի ու բնակարանային ֆոնդի հարցերով անդամ Ալֆոնսո Գոմեզի և Արտաքին կապերի գրասենյակի ղեկավար Ստիվ Բերնարդի հետ քննարկվել են բնապահպանական ոլորտում փորձի փոխանակման հարցերը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել մասնավորապես թափոնների ու ջրային ոլորտների կառավարման, ինչպես նաև ՇՄԱԳ գործընթացներում Շվեյցարիայի փորձի ուսումնասիրման ու քաղաքային միջավայրում այն ներդնելու հնարավորությունների վերաբերյալ:

3) Քննարկվել է նաև ոլորտին առնչվող համայնքային, պետական կառույցների ներգրավածությունը փորձի փոխանակման գործընթացին: Աշխատանքի արդյունավետ միջպետական մակարդակում առանցքային հարցերի առավել արդյունավետ համագործակցության և ցանկալի արդյունքներ ունենալու նպատակով հարկ ենք համարում ձևավորելու քառակողմ աշխատանքային խումբ՝ ներգրավելով երկու քաղաքների քաղաքապետարաններին և ոլորտին առնչվող հաստատություններին: Քառակողմ համագործակցությունը իր նպաստը կունենա հիմնախնդիրների լուծման ճանապարհին:

4) Ժնև քաղաքի վարչական խորհրդի անդամ Ալֆոնսո Գոմեզը իր պատրաստակամությունն է հայտնել աջակցելու և առաջարկել է տրամադրել շվեյցարական կողմին առանցքային հարցերի վերաբերյալ մանրամասն և համապարփակ տեղեկանք, որի շուրջ քառակողմ քննարկումները կլինին էլ ավելի կառուցողական:

8. <u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>

- Կողմերը դիտարկել են շրջակա միջավայրի բնապահպաններին՝ որպես գործընկերներ և կոչ արել շարունակել իրագործել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված իրենց պարտավորությունները:

- Օրհուս կենտրոնները շարունակում են դիտարկվել որպես կոնվենցիայի իրականացմանն աջակցող կառույցներ: Այդ առումով, կարևորվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) աջակցությունը, այդ թվում Հայաստանի հետ համագործակցությունը տեղական Օրհուս կենտրոնների աշխատանքի առումով:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ՝

Գայանե Գաբրիելյան
29.06.2022 թ.